ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝** Մարինե Մելիքյան, Պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝** քաղաք Սիեմ Ռիփ (Կամբոջայի Թագավորություն), 2025թ մայիսի 19-ից մինչև մայիսի 23-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը՝** Ասիական Զարգացման Բանկ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** մասնակցություն Պարտքի տարեկան համաժողովին

5. **Քննարկված թեմաները.**

- Համաշխարհային և տարածաշրջանային տնտեսական զարգացումները,
- Պարտքի արդյունավետ կառավարումը ներկա մակրոտնտեսական իրավիճակում,
- Կանաչ տնտեսությանն անցումը պետական պարտքի կառավարման մեջ,
- Պարտքի կառավարման, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացումը,
- Տեղեկատվական տեխնոլոգաների, արհեստական բանականության միտումները, ինչպես նաև կիբեռ անվտանգությունը պետական պարտքի կառավարման ստորաբաժանումներում,
- Ներքին պարտքի շուկայի զարգացումները,
- Պարտքի կառավարման մարտահրավերները փոքր երկրներում,
- Ներդրողների հետ փոխհարաբերությունները,
- Պարտքի կայունության վերլուծությունները,
- Կանխիկ հոսքերի և իրացվելիության կառավարման խնդիրները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովին ներկա են գտնվել տարածաշրջանի 27 երկրների բազմաթիվ մասնակիցներ, տարբեր առաջադեմ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Համաժողովը կազմակերպվել է հիմնականում սահիկաշար ներկայացնելու մեթոդով: Ներկայացված թեմաների վերաբերյալ կազմակերպվել են քննարկումներ հարց ու պատասխանի ձևաչափով: Երկրների ներկայացուցիչները ներկայացրել են տարբեր ասպեկտներում իրենց պարտքի կառավարման փորձը՝ հաջողություններն ու ձեռբերումները: «Պարտքի արդյունավետ կառավարումը ներկա մակրոտնտեսական իրավիճակում» քննարկման ժամանակ իմ կողմից ներկայացվել է «Պետական պարտքի արդյունավետ կառավարումը Հայաստանում» սահիկաշարը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

27 մայիսի, 2024թ.